

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՈՒԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ՀՐԱԳՐԱԹ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուլկարիա)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք եւ չեն ըրկուիր եւ յարմար դասուած ներք միայն կը հրատարակուին աւ- րոյդովին կաւ մասամբ: Ծանուցման տողը 20 սանթիմ. երե- թեւ աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը ղինի:
Պուլկարիոյ համար Տարեկան 12 փր. » » Վեցամսեայ 6 փր. Արշաւանահանի համար (երկու քիւրակի ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր. ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ	Редакция на ВѢСТНИКЪ „И р а в у н к ъ“ ВАРНА (България)	Rédaction du journal „I r a v o u n k“ V A R N A (Bulgarie)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՃԻԱՐՅԵՆ

Թրանսպարանի ներկայ պատե-
րագը ամենէն աւելի Թրանսպարան
սրտերը թունդ կը հանէ: Աստի-
կը վախճան թէ Անգլիա հարաւա-
յին Աֆրիկէի տիրելով ամբողջ
Աֆրիկէն իրեն սեփականութիւն
ընելու ձգտումին մէջ ալ աւելի կը
հաստատուի և հետեւաբար մօտ
ապագայի մը մէջ՝ Աֆրիկէ հաս-
տատուած ֆրանսական գաղթական-
նութիւնները գէպի ծովեզերքը և
օր մըն ալ այդ եզերքներէն բոլորու-
վին դուրս ձգելու ձեռնարկ մը
կ'ընէ:

Գաղղիացւոց այս վախճ չոր ե-
րեւակալութեան արդիւնք չէ, այլ
դրական հաշիւներու և դործերու
ընթացքին հաւանական հետեւան-
քն է:

Այս տեսակետով տեսէք ինչ
կըսեն ֆրանսացի ծանօթ քաղա-
քագէտներ:

«Արդէն ճիւղալովարէն Անգլիա
Մարքի վրայ կը տիրէ, Արդէսան
տիրան Նիդաի հովտին կիշխէ,
Սուէզով նա այդ երկրաբաժինն կը
կղզիացնէ, Քափէն աֆրիկեան ե-
ռանկիւնին ծայրը կը բռնէ և եր-
կու ովկէաններու հազարակցու-
թեան վրայ կը հսկէ: Արեւմտեան
կողմէն Նիթէրը, արեւելքէն Չան-
զիպարը այն գլխաւոր կէտերն են
որոնցմէ Անկիւ-Սաքսոն ազգեցու-
թիւնն կը տարածուի: Այսօր այլեւս
խնդիրը Քափի մէջ անգլիական
գաղութներն Նեղոսի հովտին հետ
միացնել չէ. այլ երկրի այդ մասը
արեւմտեան արեւելք անգլիական
գծով մը կապելն է: Փորթուքալ-
ցիք չին կրնար զայն արգելել:
Գալով Գերմանացւոց, առնոց տրա-
մադրութեան տակ կը գնեն ինչ
որ ուրիշներու գրպանէն կառնեն:
Ֆրանսա միակ արգելքն է. միայն
Ֆրանսա կրնար Անգլիոյ զօրու-
թիւնն խախտել: Ուստի ասոր հա-
մար պէտք է Ֆրանսան անգլոմա-
լուծել, անոր գէմներքին և գաղ-
թային դժուարութիւններ յարու-
ցանելով: Այս վայրկեանիս, որ
Ֆրանսա իր բոլոր ուժերով ար-
ուեստահանդէսով զբաղած է, եւ որ

Ժամանակ գիտեն թէ Ֆրանսա -
թէ բացարձակապէս ստիպուած չը
լինի - ու եւ զինուորական շարժում
չպիտի ուզէ ընել, Անգլիացիք ա.
մենայն ազատութեամբ կը գործին
Աֆրիկէի մէջ, 280,000 զեղացի-
ներու դէմ 70,000 զինուոր զրկե-
լով, նա ինքզինքն պատրաստ կը
ցուցնէ ամեն տեսակ զոհողու-
թեանց:»

Ֆրանսացւոց ահա այս տեսու-
թիւնները բաւ են ապացուցանելու
թէ որչափ սրտերնին դողի մէջ է.
թէ եւ կուզեն Անգլիոյ դէմ բան
մը ընել, բայց ինչ ընեն. եթէ
զեւանագիտական առաջարկներն
կայացնեն կը վախճան թէ կոշտ
մերժումի մը հանդիպելով, կը հար-
կադրուին զինուորական շարժումի
գիւմելու. այդ պարագային ալ
Անգլիոյ դէմ միտակ մնալէ կը վախ-
նան, ուստի գէշ ատենի հանդի-
պեցաւ ըսելով, 1900ի ցուցահան-
դէսը պատճառ կը բռնեն ու նըս-
տած տեղերնին կը մնան. և միայն
լրագրոց սիւնակներու մէջ Անգ-
լիացւոց դէմ պոռչտուքներ ընե-
լով կը գոհանան:

Այս օրերս Ֆրանսացիք ուրիշ
աֆրիկայութիւն մը ունին. այն է
Ռուսիոյ և Գերմանիոյ վեհապետ-
ներուն տեսակցութիւնը, որ տեղի
ունեցած պիտի ըլլայ փոքրամի-
մէջ. Ոմանք կը կարծեն գիտնալ
թէ սա լոկ քաղաքավարական տե-
սակցութիւն մըն է, այլք կըսեն
թէ կայսրներու խօսակցութեան
մէկ մեծ մասը պիտի կազմէ Աֆ-
րիկէի պատերազմը: Ասկէ առաջ
ալ Ֆրանսայի արտաքին գործոց
նախարար Պ. Տէլքասէի Ռուսիո-
տան այցելութիւնը և կոմս Մու-
րավիյէֆի Բարիզ գալը Ֆրան-
սացւոց բաւական յոյս ներշնչած
են ու դեռ կը ներշնչեն: Մարդի-
կը այն հաստատը ունին թէ Չա-
րը իրենց օգտին համար կը խորհի
և ներկայ պարագայի մէջ ալ երբ-
եակ ու երկեակ նիւզակուցութեանց
պիտ երկու կայսրերը համաձայ-
նութիւն գոյացնելով, հինգ մեծ պե-
տութիւնք Անգլիոյ յառաջխաղա-
ցութեանց արգելք հանգիստանան:
Խնդր Գաղղիացիք քիչ մը առաջ
ալ կը խորհէին թէ Չարը Գեր-

մանիան Ալգաւ-Լօրէնը առնելով
իրենց դարձնէ:

Մինչդեռ այսօր ամենէն ճշմա-
րիտը սա կերեւայ թէ Ռուսիա և
Գերմանիա Անգլիոյ զբաղեալ վի-
ճակէն օգտուելով երկրագնդի
տարբեր կէտերուն վրայ աշխար-
հակալական առաջխաղացութիւն-
ներ ընեն, միջկատակի ձեւով Անգ-
լիոյ ըսելով «դու թրանսպարա-
կը, մենք ալ այնինչ կէտերուն կը
տիրանանք»:

Հետեւաբար կը կարծենք թէ
այսօր թրանսպարա Անգլիոյ առ-
ջեւ անտէր ձգուած ոսկոր մըն է.
զոր կլկու համար Անգլիա չի
պիտի վարանի, նոյն իսկ եթէ
այդ ոսկոր իր կոկորդը պատուե-
լու չափ դժուարակուլ լինի: Այո՛,
Անգլիա զայն պիտի կլկէ, նոյնպէս
Օսմանիք երկիրը. ինչպէս այս
փոքրիկ հանրապետութեան նա-
խագահը զգացուցած է իր յայ-
տարարութեան մէջ, զոր ներկայ
թուով կը հրատարակենք:

Ֆրանսացւոց դուշակութիւնն
ալ իր տեղը պիտի գտնէ թէ
Անգլիա Աֆրիկէն մէկ ծայրէն մին.
չեւ միւսը իր թեւերուն տակ պի-
տի առնէ, պիտի իշխէ ու ար-
դենաւորապէս պիտի շահագործէ:
Անկէ վերջ Անգլիոյ նաւերը բա-
ւական են աֆրիկեան ահագին
կղզիին շուրջը պահպանելու և ար-
տաքին թշնամիներու մուտքը ար-
գելելու, ինչ որ Հնգկաստանի մէջ
չէ կարող ընել, որովհետեւ դա
Աֆրիկէի պէս ծովերով չրկապատ-
ուած չէ, ուստի Աֆրիկայի տանի
և թիւրքիստանի սահմաններուն
վրայ անգլիական նաւերը չեն կա-
րող բարձրանալ. հետեւաբար Անգ-
լիոյ գերքը Աֆրիկէի մէջ աւե-
լի ապահով կըլլայ որչափ չէ
եղած Հնգկաստանի մէջ:

Յ. Վախագե

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօֆիա 22 հոկտ. 99

Պուլկարիոյ Երեսփ. Ժողովրդ. — Իշ-
խանի զանաւարդ. — Ա. Նախագահի
ընտրութեան կոիւ. — Պաշտօնից եւ զօ-
րակաւաց անսակահի զեղ. — Իւրանի
խմբագիրը:

Հակառակ այնչափ գրուածոց և
տարածախնութեանց ամսոյս 15ին
ճիշդ սահմանադրական որոշեալ
օրին Սօֆիանի բացուեցաւ.
խուռն բազմութիւն պալատէն մինչ

Ժողովատեղին պողոտային երկու
կողմը, օգին գեղեցկութիւնն ալ
աւելի փայլ մը կուտար կարծես
հանդիսին, միայն թէ գէմքեր ա-
ւելի տխուր ու տրտում բան թէ
ուրախ զուարթ ինչպէս ուրիշ ա-
տեններ. զի մամոնայն շատ սրգո-
ղած կերեւի մեզ:

Ժողովին ներկայ էին ընկերվա-
րականներէն զատ միւս բոլոր կու-
սակցութիւնք. իշխանն ինք կար-
դաց դահաճառը, յորում գոհու-
նակութիւն յայտնեց որ վերջին
39 երեսփոխանաց ընտրութիւնք
ալ օրինաց սահմանին մէջ ազատ-
օրէն տեղի ունեցած են. ջախջա-
խիչ պատասխան մը հակակուսակ-
ցութեանց, մասնաւորապէս նա-
խորդ նախարարապետին հրաժա-
րագիրին, որով վերջինս կը գան-
գատէր թէ 39ի ընտրութեանց
Ժամանակ օրինական եղծումներ
տեղի ունեցած են եղեր Պ. Ռա-
տօսլավովի կուսակցական կարգա-
դրութեամբ և մինչեւ իսկ արին
թափեր է ի Սիլիստրէ և թէ գըլ-
խաւորապէս այս պատճառաւ կը
հրաժարի եղեր. մասնաւորապէս
չիշտեց «տնտեսական ճգնաժամին»
վրայ, յորում կը գտնուի ամբողջ
երկիրը, կառավարութիւն և Ժո-
ղովուրդ, և կոչում րոտ երեսփո-
խանաց հայրենասիրութեան, որ
կուսակցական հաշիւներ մէկ կողմ
դնելով, բարւոքման միջոցներու
վրայ խորհին, և երկնից օգնու-
թիւնն ու օրհնութիւնը խնդրելով
Ժողովը բացուած հրատարակեց,
Գահաճառը ծափահարուեցաւ ալ
կողմէն և մաս մը Սթանպուլ-
վիտներէն նախկին նախարարա-
պետն ի գլուխ, մինչդեռ միւսներ
անտարբեր մնացին, այս եղաւ ա-
ռաջին օրը և այսչափով գոցուե-
ցաւ, զի Ժամ 14ին սկսեցին և
11/2ին վերջացուցին, արդէն հա-
ցի ատենն ալ կը մօտենար, և ինչ
հարկ կայ արտորարու, զի ինչպէս
ալ ըլլայ, Ժողովականաց օրական
քսան ֆրանքը կը բանի:

Երկրորդ նիստի օրակարգին ա-
ռաջին խնդիրն էր Ժողովոյ Ա. Ա-
տենապետի ընտրութիւն, զի ինչ-
պէս յայտնի է նախորդը կըլթա-
կանի նախարար եղաւ: Երեսփո-

խանական ժողովի ատենապետու-
թիւնը թէոր սահմանադրական Եւ-
րոպայի մէջ մեծ նշանակութիւն
ունի, նուազ նախանձելի չէ և մեր
մէջ. որ մանաւանդ այս տարի ա-
ւելի նշանակութիւն առաւ մէկէն
աւելի թիկնածունքի գտնուելուն
և այս միեւնոյն կուսակցութեան.
արդէն շերտապէս կը խօսուէր Պ.
Պ. Խորխոս ֆոփօլին և Սալա Ի-
վանչովին վրայ. առաջինը Սօֆի-
այի քաղաքապետ, երկրորդը նա-
խարարապետին եղբայր, երկուքն
ալ փաստաբան, կուսակցութեան
կեդրոնի ազդեցիկ անդամներէն.
եկաւ և Պ. Քրայէվ, սա եւս իր-
բեւ մարդ փափաք յայտնեց, որ
Բէն Ա.ը անցնի. զի ինք արդէն
ժողովոյ երկրորդ ատենապետն է.
և ո՞ր մարդ յառաջդիմութեան չի
ձգտիր ու ահա իրարանցում կու-
սակցութեան մէջ, ամեն մի թիկ-
նածու որչափ համակիրներ այն-
չափ եւս հակակիրներ ունի. քիչ
մնաց երեքի բաժնուէր կուսակցու-
թիւնը. խեղճ Ռատոսլավով, ին-
չե՛ր կը բաշէ, որի՞ն տայ, որի՞ն
չտայ, մեծութիւնն ալ որչափ
զլխի ցաւեր ունի եղբի. հէկէ սա
առաջին երկու թիկնածունքը նըշ-
մարեցին վտանգը, խօսք հասկը-
ցան և ետ քաշուեցան, բայց Պ.
Քրայէվ պնդեց իւր ընտրելիու-
թեան վրայ, թէ ոչ ապառիկ ան-
ուղղակի, ընդհանուր խուլ հա-
կակրութիւն մը իրեն գէժ. ըն-
դունին տեսակ մը, զի միւսներն
ալ պիտի պնդէին, չընդունին նո-
րէն տեսակ մը, զի այսպէս ցաւ-
ցուցած պիտի լինէին կուսակցու-
թեան էն գործոն անդամներէն մին.
երեքօրեայ կարծեաց փուխանա-
կութիւնք չունեցան արդիւնք.
երկուշաբթի որչափ կը ձօտենայ
ժողովոյ ժամեր, սրտեր ու մըտ-
քեր ալ այնչափ կը տրոփէին.
յայտնապէս կերեւէր, որ խնդիրը
պիտի լուծուէր այսպէս թէ այն-
պէս, բայց պիտի ծնէր և անա-
կընկալներ. և արդարեւ Պ. Ժէգօ
Պազալով Եւմուսի երիտասարդ
փաստաբան երեսփոխանը 87 քը-
ւէով Ա. ատենապետ ընտրուեցաւ
մինչդեռ իւր մրցակիցը պ. Քրա-
յէվ 64 քուէ միայն ստացաւ ամ.
մողջ հակակուսակցութեան և իւր
մի քանի համակիրներու միաց-
մամբ:

Պ. Ժ. Պազալով առաջին տա-
րին է որ երեսփոխան ընտրուե-
ցաւ Պ. Քրայէվի շնորհիւ և վեր-
ջին արտակարգ Սօպրանիէին մէջ
ալ անոր հետ փոխառութեան հա-
կառակ քուէարկեց. անոր գոր-
ծակիցն էր ու գաղափարակիցը.
ինչո՞ւ թողուց զանիկայ. կուսակ-
ցութեան և ընդհանուրին շահո՞ւց
տեսակէտով թէ ի փառս իւր ան-
ձին, թէ կուսակցութիւնն ալ այս
ընտրութեամբ ուղեց Քրայէվեան.
ները բաժնել:

Արդիւնքին նայելով Պ. Քրայէվ
խսկոյն հրաժարեցաւ Բ. ատենա-
պետութենէ. ժողովն ալ փակեց
իւր նիստ չաջորդին ի նկատի առ-

նելու Բ. Դ. Ատենապետաց հրա-
ժարականները. չորեքշաբթի եկաւ
գրեթէ ուրիշ խօսք առնող չեղաւ,
Պ. Քրայէվ ինք մինակ խօսեցաւ.
շնորհակալութիւն յայտնեց մեծա-
մասնութեան անցելոյն համար, չը-
նորհակալութիւն յայտնեց և հա-
կակուսակցութեան ներկային հա-
մար և ինքզինք անկախ հրատա-
րակելով նստաւ երկու կուսակցու-
թեանց միջեւ կեդրոնը. իրեն տեղ
ընտրուեցաւ Պ. Ժօվ թիկնածու
փաստաբանը, Ռատոսլավովիստ
ինչպէս նախորդ թղթակցութեա-
ցըս մէջ գիտած էի, այսօր կաւ-
նենք և «անկախ ազատական»
կուսակցութիւն մըն ալ, որ կըր-
նայ զօրանալ հետզհետէ:

Հարուած մը էր այս փրէսլավի
երեսփոխանին, անոր անձնասի-
րութեան և ձգտումներուն. սա-
կայն հարուած մ'ալ եղաւ կուսակ-
ցութեան. Միթէ՛ այսպիսի սին ու
պատիր և անձնական կիրքերէ
չեն ծնիր տարբեր կուսակցու-
թիւնք. ո՞չ ապաքէն մեր մէջ ալ
Արմէնիանը ծնաւ Հնչակը, Հնչա-
կը ծնաւ Դրօշակը, Դրօշակը ծը-
նաւ Մարտը և ո՞վ գիտէ ինչ
պիտի ծնի Մարտը. միայն թէ
ինչո՞ւ այս, քանի որ նպատակ
նոյն է, ինչո՞ւ չը զոհուին եւս.
կան հաշիւներ և ձգտումներ յօ-
գուտ ընդհանուրին. այս կէտն է
զոր կ'ատեմ ևս և ուրկէ կը գար-
շիմ:

Գ. Ատենապետն ալ Պ. Բանա-
յօղով, Սթանպուլովիստ հրաժա-
րեցաւ նոյնպէս կուսակցական հա-
շիւներով, սակայն այս հրաժա-
րում բողոքովին տարբեր արդիւնք
ունեցաւ. արդէն քանիցս խնդիր
եղած էր Դ. ատենապետութիւնը
լնջել որ միայն կուսակցական կիր-
քեր յագեցնելու համար պահուած
էր, այս անգամ նոյն ինքն փոք-
րամասնութեան մեծագոյն մասին
միաձայն քուէով լնջուեցաւ Դ.
փոխ ատենապետութիւնը և այս-
պէս 1500 ֆրանքի տարեկան խը-
նայողութիւն մը նոյն իսկ երես-
փոխանական ժողովոյ գիւմուսէն
սկսաւ. վեց օրեր անցան այս-
պէս եւս ու դռնի խնդիրներով. հի-
մայ որ ալ դռն չկայ, ամենքն ալ
էս են, յուսանք սպասենք, որ
ժողովոյ նիստերն ալ օգտակարա-
գոյն լինէին: Այժմէն կը խօսուի,
որ առաջիկայ յունվարէն սպայից
և պաշտօնէից ամսականներէն 70'0
զեղչ պիտի լինի. նախարարական
ժողովն ալ որոշած է որ տարւոյս
սեպտեմբեր ամսէն սկսեալ մինեւ
1900ի վերջը սպայից և պաշտօ-
նէից ամսականներէն վար դրուին
20 0/0 տարեկան 2400 ֆր.էն ա-
ւելի առնողներէն. 25 0/0 մինչեւ
4800 ֆր. տարեկան առնողներէն,
30 0/0 4800 ֆր.էն աւելի տարե-
կան առնողներէն, երկու տարիէն
դարձեալ կառավարութեան վճա-
րուելու պայմանաւ:

Պիտի ընդունուի՞ն այս որոշում.
ներ նոյնութեամբ կամ փոփոխու-
թեամբ թէ ոչ. բացայայտ է որ
այնպէս թէ այսպէս պիտի ըն-
դունուին. նկատելու կէտը սա է,
որ կառավարութիւնը այսպէս
կերպ մը ներքին փոխառութիւն
կընէ եւրոպացի դրամատէրերու

քիթը կոտրելու համար և ամա-
կաններն ալ վճարելու գործը առ-
տիճան մը կը դիւրացնէ, սակայն
սպեղանի պիտի լինի՝ 260 միլիոն
պարտքը վճարելու համար, որ
ծանրապէս չօքած է երկրին վրայ
ահա բուն խորհելու կէտը նոյն
ինքն ամեն մի պուլկար քաղաքա-
ցիին համար:

Ա.
Յ. Գ.—«Իսլահ» սալահանէն
նետուեցաւ. զլիւսուր խմբագիրը,
որ բանտարկուած էր, երկու օր
վերջ արձակուեցաւ պայմանաւ որ
ինքնին հեռանայ տեղէն, նոյն
Էսկ Պուլկարիայէն թէ ոչ հակա-
ռակ պարագային պիտի արտաք-
սուի խեղճ Արապն ալ ինչ ընէ,
ճարահատեալ ամսոյս 15ին, ճիշդ
Սօպրանիէի բացման օր կծիկը
դրաւ. ինչ զուգահեռութիւն:

Նոյն

ՄԱՀ
ՈՍԿԱՆ-ՆԱԶԱՐԻ
ԵՂԻՍԱՍՐ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

Գահիրէի մեր թղթակիցը քա-
նի մը տողերով գուժած է մեզ այս
համակրելի վասպուրականցի հայ-
րենասէրին մահը:

Ոսկան-Նազար ծանօթ է մեր
ընթերցողաց իր եռանդոտ յոգ-
ուածներով և ոտանաւորներով. նա
տարիի մը չափ սիրալոյսով աշխա-
տակցած է «Իրաւունք»ի. միայն
դադրած էր գրելէ այս վերջին եր-
կու ամիսներուն մէջ, յորում ալ
եւս զինք ընկճած էր թոքախտը,
որ վերջապէս զանի գերեզման ա-
ռաջնորդեց չորջ երեսուն տարե-
կան ծաղիկ հասակին մէջ:

Ոսկան չէր այն յեղափոխական-
ներէն որք միայն արտասահմանի
մէջ պոռչտալ կը սիրէին. ինք ան-
ձամբ մտած էր քանի քանի ան-
գամներ կուրծներու մէջ. հայրենա
նուէր ճշմարիտ յեղափոխականի մը
սպասող ամեն ճգանքը ու տառա-
պանքը կրած էր իր մարմնոյն վը-
րայ. վերջը ստիպուած էր Հայ-
րենիքէն հեռանալ. ուստի Պարս-
կաստան, Ռուսաստան և Պուլկա-
րիա ժամանակ մը պըտըտելէ յի-
տոյ անցեալ տարի Եգիպտոս ան-
ցած էր, ուր հայրենասիրական
չատ մը գործերու մէջ իր կարեւոր
դերը ունեցաւ:

Ժամանակէ մը ի վեր Ալէքսան-
տրիոյ հիւանդանոցը փոխադրուած
էր, ուր հոկտ. 10ին իր մահկա-
նացուն կնքեց է: Յուդարկաւո-
րութիւնը փառաւոր եղած է. Գեր-
Աշոտ եպիսկ. և վահրամ վարդա-
պետ նախագահած են այդ տխուր
հանգէսին. 4-500 երիտասարդներ
յուդարկաւորութեան մասնակցած
են. իրեն համակիր երիտասարդաց
խումբերու կողմէ երեք պսակներ
զրկուած են:

Գեր. Աշոտ Սրբազան և ուրիշ
երեք ազգայիններ դամբանական-
ներ խօսած են, դրուատելով հան-
գուցելոյն հայրենանուէր կեանքը:
Խմբագրութիւնս. այս վաղահաս
մահէն խորապէս զգածուած սըր-
տաբուլի կը մըմնջէ. «յիշատակն
արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Պ. ԵԱՀՐԻՄԱՆԻՆ

«Շարժում» լրագրոյ վերջին
թուոյն մէջ ձեր պաշտօնական
ստորագրութեամբ յօդուած մը
կարդացի, ուր կծու ակնարկու-
թիւններ կընէիք «Իրաւունք»ի
թղթակցին, և միայնդամայն բա-
ցատրութիւն մը կուտայիք «Գի-
տող» ծածկանունան տակ սքողեալ
յօդուածագրոյն կարծեաց վրայ:

Եթէ ներքի է ինձ իրբեւ ալ
զային անհատ և բարեկամ Զիլ-
պէի վարժարանին յառաջդիմու-
թեան, խօսիլ և կարծիք յայտնե-
կաղաչեմ որ ներողամտութեամբ
ուշադրութեան առնուք իմ հե-
տեւեալ խորհրդածութիւններս:

Կը խոստովանիմ թէ «Իրաւուն-
ք»ի թղթակիցը անպատեհ ժա-
մանակի մէջ խնդրը մը հրապա-
րակ նետած է և զայն ալ անվա-
յել բառով մը, զի դուք ազգ. իշ-
խանութեան կողմանէ կարգեալ
էք, ալ ո՞չ վարձեալ, որ յոռի և
անախորժ նշանակութիւն մը ունի
Բայց երբէք չէ սխալած երբ կը
տեղեկացնէ թէ ո՞ր և է կուսակ-
ցութեան մը ծառայելէ կարգելու
զձեզ վարժարանին հոգաբարձու-
թիւնը: Վասն զի եթէ այս իշխա-
նութիւնը՝ որ կառավարութեան
վաւերացեալ կըլլայ, մոռցած լինի
ձեր վրայ պարտք դնել կուսակ-
ցութեանց չը ծառայելը, երկրին
օրէնքը զայս կը պահանջէ և մին-
չեւ իսկ պաշտօնագրերի կընէ այս
օրինաց անաստող պաշտօնային:
Այս պաշտօնէութեան կարգէն կը
համարուին նաև դաստիարակներ.
հետեւաբար իբրեւ պուլկարահա-
տակ պաշտօնեայ պարտական էք
հնազանդիլ այս օրինաց:

Գալով կրօնագիտութեան մա-
սին «Գիտող»ին յայտնած գաղա-
փարին, որ զետեղուած էր «Իրա-
ւունք»ի ուրիշ մի թուոյ մէջ, կը-
սեմ թէ ես բան մը չը հասկցայ
զայն կարգացած միջոցիս. կերե-
ւայ թէ նորա իմաստը լաւ ըմ-
բռնած էք, զի լատիներէն բառ
մը աւելցնելով բացատրութիւններ
տուած էիք: Այս մասին չեմ մե-
ղադրեր այս յօդուածագիրը
և իրաւամբ, ամեն ժամանակ պա-
տեհութիւն կունենամք տեսել
զձեզ չըլլապատեալ Դաշնակցական
կուսակցութեան անուամբ միայն
յարեալ երկու տեղափոխելէ, յորոց
մին կատաղի բողոքական մըն է
որ համարձակած է Ս. Եկեղեց-
ւոյս մկրտութեան սրբազան խոր-
հուրդը գրաւոր կերպիւ ծաղրել
և միւսը պապադաւան մը որ Ա-
րամեանի լուսանկարը պսակի մէջ
զետեղած մեր եկեղեցւոյն մէջ սե-
ղանի մը վրայ դրաւ հոգեհանգիստ
կատարուած ժամանակ. ինչ որ
հայաստանեայց Ս. Եկեղեցին ար-
գիւած է և դուք իբրեւ Տնօրէն
դաստառ ալ վարժարանին դի-
տողութիւն մը չըրիք այդ պար-

նին, բանի որ պատարագիչ քա-
հանին անտեղեկ գործոյն, չէր
կրնար զայն արգելել և ո՛չ ալ ի-
րեն ներքի էր բեմէն խօսիլ Ս.
արարողութեան ժամանակ:

Իմ այս դիտողութիւններս հոս
բացատրած միջոցիս՝ ձեր ներու-
ղամտութիւնը կը խնդրեմ, ձեր
յօրութեան վերջաբանին մէջ տը-
ռած խորհուրդնիդ ձեզ վերա-
դարձնելով կրկնել թէ «լաւ է
զարգրելի ինքնամտիայ լուծութիւ-
նը ընդունիլ» և երբեք գրիչ
ձեռք չառնուք ձեզի դէմ եղած
որ և է դիտողութիւնը մը հերքելու,
բանի որ խնդրել պատուոյ և պաշ-
տամանց չվերաբերիր. զի ազգա-
յին ամսականաւոր պաշտօնեայ մը
էք և պարտական էք չեղօք դիրք
ունենալ: Զեզ համար հայրեր կան,
որոց զաւակունքը դատարարակե-
լու համար կոչուած էք և պարտք
է ձեզ կրթել զանոնք կրօնական
և հայրենասիրական սուրբ զգաց-
մամբ:

Բարի նախանձով վառեալ կը
գրեմ այս տողերը, վառելի սկը-
ռած գործ մը քանդելու փորձեր
ընող անձանց դէմ միշտ թշնամի
եղած եմ, որչափ ժամանամ որ
ապրած եմ այդ քաղաքիդ մէջ. և
կը փափագիմ որ դուք կծու հրա-
տարարութեամբ մտքերն չլուզէք
որ հազիւ կրցան խաղաղիլ, այլ
հոգի մըն է որ մոխրոյ տակ ծած-
կուած է այս երկու իրարու հա-
կառակ կուսակցութեանց վէժը
զոր բառնալու համար որչափ ջանք
ըրի, ի դուր վատնեցաւ:

Կրկին կաղաչեմ որ ներէք ինձ
և մատուցանելով յարգանքս:

Մնամ անձնուէր ազդիս
Փ.
24 հոկտ. 99
Սօֆիա

ԲՈՒՆԻԹԵԱՆ ՏԱԿ (55)
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅԱՅ ԶԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՅՏԵՐ ՄԵ

— օ. —
ՄԱՍՆ Բ.
— Ժ. —

96 հոկտեմբերի 17ին ցուրտ օր մը
Թուսական «Նաչէվիչ» շոգենաւը կը
պատրաստուէր Պաթում մեկնելու. ձիւ-
նը կը տեղար խիտ փերթերով: Կ. Պոլ-
սոյ նաւահանգիստը իր սովորական ու-
ղեւորութիւնէն ոչինչ էր կորսնցուցած
սակայն, շոգենաւեր, շոգենաւակներ,
նաւակներ իրենց անդադրում երթեա-
նել կը շարունակէին:

Այս պահուն Կալաթայի քարափին
վրայ խնամքով հազուած տարիքոտ անձ
մը երեւցաւ: Յիսուսը հինգ վաթսուս
տարեկանի երեւոյթը ունէր ան: Մուշ-
տակապատ օձիքով վերարկուին մէջէն
ղուր կը ցցուէր մասամբ առաջ ծոած
լափաւոր գլուխ մը, չոր և սոգոյն
դէմք մը ունէր այդ անձը ու աչքերը
մարմուկ ցոլքեր կարձակէին: Կ'փու-
թանք ըսելու որ թոքախտաւորի մը
ամեն նշանները կային անոր վրայ:
Մեր ակնարկած անձը միջակ պա-
լուսակէ մը զատ ոչինչ ունէր հե-
տը. չափէ զուրս յոգնած և ապառա-
ծի երեւոյթը ունէր:

Մաքսատան պաշտօնեան երբ պայու-
սակը գնելու ձեւով իրեն մօտեցաւ
ան զգուանքի արտայայտութեամբ մը
զոգողուն ձեռքերը վերարկուին գըր-
պանը տարաւ և կէս մէժիտ հանելով

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՂԱՇ ԵՂԵՑՆԻ

— օ. —

«Ո՛վ Պօէրք Օրանթի ազատ Պետու-
թեան, եկաւ հասաւ այն ժամանակ՝
զոր ա՛յնքան կը փափաքէինք հետեցնել
մեզմէ, ա՛յն վայրկեան երբ մեք իբրեւ
մէկ ազգ ստիպուած ենք գէնքով գի-
մադրել անիրաւութեան եւ լիբր բըռ-
նութեան: Վալ գետին հիւսիսային
կողմը մեր քոյր Հանրապետութիւն
յարձակուա՛ն կը կրէ անխիղճ թշնամիէ
մը որ շատ տարիներէ ի վեր պատրաս-
տութիւններ կը տեսնէր. եւ պատրուակ
կը փնտռէր, որոյ բռնութեան ի՛նքն
է պատասխանատու, եւ որոյ նպատակն
է ջնջել Աֆրիկայանէր ցեղին գոյու-
թիւնը:

«Մեր քոյր Հանրապետութեան հետ
մեք կապուած ենք ո՛չ միայն արեան,
համակրութեան եւ հասարակաց շահու
կապերով, այլ նաեւ յայտնի Դաշնա-
գրութեամբ: զոր հաստատեցինք պա-
րագտներուն ընդմիջմբ: Այդ դաշնա-
գրութիւն կը պահանջէ մեզնէ որ օդ-
նենք անոր՝ եթէ յանդիման յարձակում
կրէ, որուն դժբաղդաբար երկար ժա-
մանակէ ի վեր իրաւունք ունէինք ըն-
պասելու: Հետեւաբար մենք չենք կըր-
նար անտարբեր հանդիսատես ըլլալ երբ
անիրաւութիւն կը գործուի անոր, երբ
վտանգի մէջ է նաեւ մեր իսկ աղա-
տութիւնը՝ զոր ա՛յնքան սուղ գին-
ցինք, այլ կոչուած ենք իբրեւ մարդ
դիմադրելու, վտանգելով Ամենակրօ-
ղին, հաստատուն հաւատք ունենալով
թէ՛ նա երբեք պիտի չթողու որ անի-
րաւութիւնն ու անարդարութիւնն յաղ-
թանակեն, եւ յենով նաեւ մեր իրա-
ւանց վրայ որք յայտնի են յաշս Աս-
տուծոյ եւ բովանդակ աշխարհի:

«Հիմակ որ զօրաւոր թշնամի մը կը
դիմ. դրենք, որուն հետ բարեկամու-
թեամբ ապրիլ եղած է միշտ մեր պար-
կեշտ բաղձանք, հակառակ անցիլուն
մէջ անոր մեզ ըրած անիրաւութեան եւ
անարդարութեան, հանդիսաւորապէս կը

անոր ափը դրաւ. պաշտօնեան լոճիկ
մեկնեցաւ: Մաքսատան պաշտօնեային
մեկնելէն ետք նաեւ մը վարձեց եւ
«Նաչէվիչ» ի վրայ յառաջանալու հրա-
հանգ ստեաւ: Հազիւ թէ նստարանի
վրայ բազմած, թեթեւ հազ մը բռնեց
որ նաեւակին յառաջանալուն հետ սկսաւ
բորբոքիլ:

Հինգ տարւ վայրկեանէն շոգենաւին
մօտեցան, ուր բոլիս մը անցադիր հար-
ցուց իրեն, ճամբորդը հոս ալ քառթ
մէժիտ մը տուաւ, անոր քննութեան
ձանձրոյթէն ազատելու համար եւ չո-
գենաւ բարձրացաւ, ու մասնաւոր խը-
ցիկ մը առանձնանալով իսկոյն անկո-
ղին մտաւ:

Կէս ժամ ետքը շոգենաւը ճամբայ
եկաւ, երեկոյեան ճաշէն ետք խեղճ
ճամբորդը այնքան հազաց որ վրան
նուաղում եկաւ. քամառթը պարտա-
ւորեցաւ նաեւային բօխկը կանչելու,
այս վերջինը գալով հաստատեց անոր
զօրաւոր թոքախտէ մը բռնուած ըլ-
լալը: «Ո՛ր պիտի ելնես հարցուց բը-
ծիչը:

— Կիրասոն, պատասխանեց ճամբոր-
դը խեղճուկ ձայնով մը:

— Եղբնաւէն ելնիլէք ետք, առանց
ժամանակ կորսնցնելու առաջին գործդ
պիտի ըլլայ հիւանդանոց երթալը ըսաւ
անոր:

— Իայց ես դէպի Ակն ճամբայ ելնել
մտադրած եմ:

— Շատ գէշ խաղ մը փորձած պիտի
ըլլաս, վրայ բերաւ բօխկը. գիտցած
եղիր որ հանգստութեան մեծ պէտք
ունիս:

յայտարարենք, առաջի Ամենակարողին
Առաւծոյ, թէ ստիպուած ենք դիմա-
դրել մեր ազգակիցներուն եղած անի-
րաւութեան պատճառաւ, եւ սա՛ գի-
տակցութեամբ թէ անոնց անկախու-
թիւնը վերնալով՝ մեր գոյութիւնն ալ
իրեւե անկախ ազգ ի նշանակութիւն
պիտի չունենայ, եւ եթէ անոնք հար-
կադրուին գլուխ ծռել գերակշիռ պե-
տութեան մը լուծին տակ, մեք ալ քիչ
ատենէն անեւց բախտակից պիտի ըլ-
լանք:

«Հանդիսաւոր դաշնագրութիւնք չը
կրցան պաշտպանել մեր քոյր Հանրա-
պետութիւնը ջնջուած, եղծուած գեր-
իշխանութեան մը պահանջուններուն,
գաւերուն դէմ, անընգհատ հարստա-
րութեանց եւ ներքին գործերու մի-
ջամտութեան դէմ, եւ հիմակ ալ կըր-
նուած յարձակման մը դէմ, որոյ նը-
պատակն է բոլորովին կործանել ան-
կախութիւնն մը:

«Անցելոյն մէջ մեր իսկ դժբաղդ փոր
ճառութիւն ըստ բաւականի ցոյց տը-
ւաւ մեզ թէ չենք կրնար վստահիլ Մե-
ծըն Բրիտանիոյ ամենէն հանդիսաւոր
խստութեանը եւ համաձայնութեանց
երբ նա իր կառավարութեան ղեկն
յանձնած է այնպիսի մարդոց որ պատ-
րաստուած են ոտնակոխ ընել Դաշնա-
գրութիւնները, եւ կեղծ պատրուակ-
ներ գտնել ամեն անգամ որ բռնաբա-
րեն իրենց խօսքը: Ասոր ապացոյցն է,
ի միջի այլոց, բրիտանեան անարդար
եւ ապօրինի միջամտութիւնը, երբ մեր
արեւելեան սահմանագլխին վրայ յաղ-
թեցինք զինեալ ու սեւամուրթ բարբա-
րոս ցեղի մը, ինչպէս նաեւ երբ մեզ-
մէ յափշտակեց մեր երկրին մէկ մա-
ւը, ուր աղամանդի հանքեր դտնուած
էին, թէեւ այս յափշտակումը հակառակ
էր դոյութիւնն ունեցող դաշնագրու-
թեանց: Մէկէ աւելի անգամ Անգլիա,
հակառակ դաշնագրութեանց, փափա-
քած է առ ոտն կոխել մեր իրանուը-
ները իբրեւ անկախ եւ գերիշխան պե-
տութիւն, եւ հիմակ ալ անոր ներկայ

«Կը տեսնանք, մտածեց ճամբորդը:
Հազը մեղմացնելու համար բօխկին
տուած դեղը օդնութիւն մը չունեցաւ
ճամբորդին, որ երկու օր անտանելի
կերպով տանջուելէ ետք վերջապէս Կի-
րասոն ցամաք եկաւ: Զգաց որ չափէ
դուրս հասած էր: Կառք մը նստելով
վաճառականական գործակատար Գրի-
գոր անուն անձի մը սուներ իջեանե-
ցաւ:

Գրիգոր տունէն էր երբ ճամբորդի մը
գալուստն իմացուցին իրեն: Իսկոյն
փութաց անոր առջեւ եւ ապշած այդ
մաշուած մարդուն երեսը կը նայէր ա-
նոր ով ըլլային ստուգելու համար յիշ-
ողութեանը գոտ տալով:

«Կերեւալ չը ճանչցար նկատել տուաւ
ճամբորդը:

— Ներեցէք, կակազեց Գրիգոր:

— Ակնցի Յովհաննէս Նիկողոսեանն
եմ, պատասխանեց հիւանդը:

— Դուք Յովհաննէս աղան, իմ թան-
կազին մտերիմս, այս օր, այս օդին
ինչ բան քեզի ստիպեց ձմեռային
ճամբորդութիւն մը փորձելու:

— Կարծեմ դիս շատ փոխուած գտար
Գրիգոր աղա չէ՞:

— Հաւատացիր որ ոչ, կեղծեց գոր-
ծակատարը, անոր վիշաղ չսաստակացնե-
լու զգուշութեամբ:

Երկու ծանօթներ տաք սենեակ մը
քաշուեցան: Յովհաննէս աղա զգացուց
որ հանգստի պէտք ունէր. շուտ մը ի-
րեն համար անկողին պատրաստեցաւ:
Ակն պիտի երթամ Գրիգոր աղա,
ըսաւ Յովհաննէս, գիտեմ որ մահս մօ-
տեցած է. գէթ վերջին շունչս իմ պա-

կառավարութիւնը նոյն բանն ընել կը
ուզէ պաշտօնաթուղթերն ուղարկել
մեկնելով, եւ գերիշխանութեան ան-
հիմն պահանջումը մը ենթադրելով ամ-
բողջ Հարաւային Աֆրիկէի վրայ, եւ
հետեւաբար նաեւ մեր պետութեան
վրայ:

«Դալով բուն Թրանսվալի Հանրա-
պետութեան, Մեծն Բրիտանիա մեր-
ժած է մինչեւ հիմա թոյլ տալ անոր
որ իր նախկին գիրքը վերստանայ ար-
տաքին գործերու մէջ, դիրք մը՝ զոր
Թրանսվալ կորսնցուցած չէ բնաւ ո՛
եւ է յանցանք գործելով:

«Անգղիա խեղաթիւրեց բուն իմաս-
տըն ա՛յն դաշնագրութեանց որոց հա-
ւանած էր Թրանսվալ պարագայից
ճնշման տակ, եւ բրիտանական ներկայ
վարչութիւնը շարունակ այդ Դաշնա-
գրութիւնները գործածեց իբրեւ միջոց
բռնաբարութիւն եւ անիրաւութիւն ի
գործ գնելու, եւ ի միջի այլոց օգնելու
յեղափոխական շարժման մը Հանրապե-
տութեան մէջ ի նպաստ Մեծն Բրի-
տանիոյ:

«Եւ մինչդեռ բրիտանական կառա-
ւարութիւնն ու եւ է գարման չէր
ստաներ իրաց այս վիճակին, ինչպէս
արդարութիւնն ալ կը պահանջէր, մինչ
դեռ ու եւ է երախտադրութիւն չի
յայտնուիր այն վեհանձնութեան համար
զոր Թրանսվալ բրիտանական կառա-
ւարութեան ինչորանոց ցոյց կուտար
Անգլիացի հպատակներուն, որք իրենց
կեանքն ու ստացուածքը կը պահպանեն
Հանրապետութեան օրինաց ներքեւ,
ընդհակառակն ամօթոյ ու եւ է զգացում
չարգիլեց անգլիական կառավարութիւ-
նը, հիմակ որ մեր երկրին մէջ թան-
կազին ոսկեհանքեր գտնուեցան, Հան-
րապետութեանէն ա՛յնպիսի պահանջում-
ներ ընելէ, որոց հետեւանք սա՛ պի-
տի ըլլայ, եթէ ընդունուին. այսինքն
անոնք՝ որք, կամ անոնց նախահարք
երկրին ազատեցին բարբարոսութենէ
եւ քաղաքակրթեցին զայն իրենց ար-
եամբ եւ արցունքներով, պիտի կոր-

պերուս հողին վրայ տամ աս է միակ
փափաքս. բա՛յց . . . տխուր նախա-
զգացում մը կըսէ որ ատ բաղդին չը
պիտի արժանանամ. ա՛յն այդ մտածու-
մը կը վարդէ սիրտս

— Յոյս ունեցիր Յովհաննէս աղա:

— Երբ արդէն ամեն բան ջախջախած
լինեցած է, միմոաց հիւանդը: »

Անիկայ միտքը դրած էր Կիրասոն
հասնելուն երկրորդ օրը ճամբայ ելնել
դէպի Ակն. բայց հիւանդութեան տա-
կաւ սաստկանալուն պատճառաւ այդ
բանը անկարելի եղաւ: Օր մը ետքը
Յովհաննէս աղայի հրահանգով Գրիգոր
Ակն Գէորգին գրեց անոր հիւանդագին
Ծիրասոն հասած ըլլալու մասին եւ ը-
սաւ նամակին մէջ որ առանց ժամա-
նակ կորսնցնելու փութայ Կիրասոն:
Տաք օր ետքը Գէորգ աղա եկաւ:

Երէք օր հազիւ թէ իր եղբոր տե-
սութիւնը վայելեց: Յովհաննէս աղան
Կիրասոն իջնալէն 14 օր ետքը մեռաւ
«հայրենիքս, կինս, Հրանդա միմոալով:
Կիրասոնի ազգային գերեզմանատու-
նը անշուք սնկիւն մը կը հանգչի հիմա
այդ պատուաւոր հայը զոր դաւաճան
մը իր յիմնադրութիւն գոհեց բռնութիւ-
նը իրեն թիկն ունենալով:

Ե. Կաւմարական
(Շարունակելի)



անցնեն հակակշիռի իրաւունքն իրենց եղբորն գործերուն վրայ, որուն իրաւունքն ունին ըստ աստուածային եւ մարդկային օրինաց։ Ասկէ զատ այդ պահանջութիւններուն հետեւանքը պիտի ըլլայ երկրին իշխանութեան մեծագոյն մասն յանձնել անոնց ձեռքը՝ որք ծըննդեամբ օտարական, երկիրն (Թրանս-վայ) իր պիտաւոր հարստութենէն զերկելու տարօրինակ առանձնաշնորհումը կը վայելին, մինչդեռ ո եւ է հաւատարմութիւնն ցոյց տուած չեն ըստ օտար կառավարութեան մը ցոյց տրուած հաւատարմութենէն։ Ասկից զատ, այս պահանջութիւններուն ընդունելութեան անխուսափելի հետեւանքը սա՛ պիտի ըլլայ թէ անդառնալի կերպով պիտի կորսուի երկրին անկախութիւնն իբրեւ ինքնօրէն, անկախ եւ գերիշխան Հանրապետութիւն։ Տարինսիէ ի վեր բազմաթիւ բրիտանական զինուորներ դրուած են մեր քաղաք Հանրապետութեան սահմանագիծերուն վրայ, որպէս զի վախճանով զայն բռնադատեն տեղի տալ իրեն վրայ եղած ճնշումներուն, եւ որպէսզի նաեւ քաջաբերութիւն յեղափոխական անկարգութիւններն եւ նենգամտ ծրագրերն անոնց որոց անամօթ ձեռնարկութեանց պատճառն է ոսկւոյ անյադ տնէնը։

«Այս ծրագրեր այժմ իրենց ծայրագոյն աստիճանն հասած են յայտնի համարձակ բռնաւարութեան մը միջոցաւ, որուն գիմել կը զիջանի անգլիական արդի կառավարութիւնը։ Խոստովանելով ճանդերձ պատուաւոր նկարագրին հազարաւոր Անգլիացի ոչ, որք զգուշանք կը դրան յափշտակութեան եւ անիրաւութեան նմանօրինակ գործերէն չենք կրնար ռակայն մեր զգուշանքը չյայտնել զայն գործութեանց ա՛յս աստիճան անամօթաբար բռնաբարութիւն, օրինաւորութեան կեղծ պատուակներուն, միջազգային օրինաց ոտնակոխ ըլլալուն եւ ուրիշ բազմաթիւ իրաւասպան գործերուն բրիտանացի պետական մարդոց որք այժմ կոռւիլ կը հարկադրեն Հարաւ-Արեւելեան Հանրապետութիւնը։ Անոնց ձեռքին մէջ է արեւմտեան պատասխանատուութիւնը, եւ իցի՛ւ արդար նախախնամութիւն մը տար անոնց արժանաւոր վարձքը։

«Ո՛վ Պօէրը Օրանժի ազատ պետութեան, -նէ՛ք իբրեւ մէ՛կ մարդ հարստահարչին եւ իրաւանց բռնաբարութիւնը։

«Հոգ տարէ՛ք այս կոռույն մէջ, որուն կրակունքը յակամայս, քրիստոնէի մը կամ Օրանժի Ազատ Պետութեան Պօէրի մը անարժան գործ չ՛գործել։ Վստահութեամբ սպասենք յայնոք վախճանին այս կոռույն, յոյս դնելով այն բարձրագոյն կարողութեան վրայ, առանց որոյ օգնութեան մարդկային զէնքերն ոչինչ են։

«Աստուած օրհնէ՛ մեր զէնքերը։ Անոր դրօշին ներքեւ առաջ կը քալինք ի ճակատ Հայրենիքին եւ անկախութեան համար։

«Իմ ձեռքով գրուած եւ կնքուած ի Պէժմֆոնդայն՝ Օրանժի Ազատ Պետութեան կնքով։

«ՇԴԱՅՆ, ՆԱԽԱԴԱՆՆ»

ՄԻԻԹԵՆԵՎԱԿՅԵ

— Սապրգ Պատրիարք Խորեն արքեպիսկոս Ալեքեան պիւր վագրութեան պէրու մուգտարրպ օլտըղը միտէ խաւթալըղընտան սալը կիւնիւ վէֆաթ իթմիշ տիր։ Միւթէ վէֆա 57 եաշընաւ ըսը։

վէֆաթընտան խալը վագրութեմ չէվէլ շէրիյէթ ահքեամընճա պիր վասիյաթնամէ իլէ 1500 լիրա գըլմէթինտէ օլան եէնի եարտըմըլ օլտըղը խանէսինի միլլէթէ վագֆ իթմիշ տէնիլիօր։

— Մաքեթոնիատա Սըրպ. Պուլկար մէսէլէսինտէն տօլայը Սթանպուլ տան պէր վէճհի աթի եազիյօրլար։

«Սըրպ րահիպի Ֆերմիլանըն իւսքիւպէ մէթըրօրլիթ թային օլընմասընտան վէ իւքի-Սերպիատա (Թիւրքիա) եէնի սըրպ մէքթէպլէրին աշըլմասընտան տօլայը հէրնէ գատար Սերպիատա սէվինճ հիւքմ իթմէքտէ իսէտէ, աքսի օլարադ Մաքեթոնիանըն իւքի-Սերպիա թուպիւր օլընան զըսմտա Պուլկար էհալիսի պէյնինտէ հիտտէթ ու իսթիլալ հիւքիւմֆէրմա տըր։ Էօլլէքի հիւքիւմէթ իսթիլալը թէսքին իտէպիլմէք իշիւն պիր թապուր աքքէր ճէլպ իթմէկէ մէքպուր օլտը։

«Պիր տէլէճէ Պուլկար էհալիյէ իգթիֆա վէրմիշ օլմագ իշիւն հիւքիւմէթ Պուլկարարա մուխալիֆ հարէքէթտէ պուլընան պիր սերպիալըլը իսթիւմ իթտի։»

— Սերպիանըն Սթանպուլ էլշիսի Ս. Նօվաֆօվիշ հէնիտէն մահէլի մէմուրիյէթինէ ալտէթ իթտի վէ պու մինտսիպէթլէ Սուլթանըն հուլընա գապուլ օլընտը։

— Վիէննա կաղէթալարընտան պիր պուլնտան էվէլէ հազմըշտըքի, խալիֆէլիկի Ասիայա եախօտ Աֆրիգայա նազլ իթմէք մագսէտի իլէ Սթանպուլա պիր գօմիթէթ պուլընմըլ։

Սթանպուլտան պիր թէլէկրաֆ պու հապատիսի թէքքիպ իտիյօր։

— Քէզա Սթանպուլտան տիկէր պիր թէլէկրաֆ Սաուրազամըն էօլմիւշ օլտըլընա տայիւր չըգան շալէթըն էսասըլ օլտըլընը վէ մուսալիէհին մէմուրիյէթինէ տէվամ իթմէքտէ պուլընտըլընը պիր տիրիյօր։

— Սամօտ ատալարըն Ալմանիայ թէքք օլընմասը խուսուսընտա ինկիլիթէրա ըազի օլմագտա ըմըլ։ Թրանսպալատա Ալմանիա ինկիլիթէրայա մուխալիֆ պուլընմասընա մուգապիլ Սամայը պու ոըրա գարմագ թէլաշընտա պուլընըյօր։ Սըրա Բուսիանըն տըր։

— Ինկիլիթրանըն հարպ վարօրչարըն գըյմէքի ոչ մըգտարը։

Պիր ինկիլիթ ըհալէսի Բրիտանիանըն մուլթազաւ հարպ սէֆի. նէլէրին էվաֆ ու տէլէճէի թէհամմիլ ու գուվվէթլէրինի թալսիֆ ու իլգահ իթտիքտէն սօնրա, անլէրին մէճմուլի գըլմէթի 2 միլեար 700 միլեոն ֆրանկա պալիլ օլտըլընը շու եօլտա պէյան իթմիշ տիր։

64 քիւրասէ 1 միլեար 300 միլեոն ֆրանկ. 15 կարտ-գօթ 78 միլեոն, 22 գուլաւտօր-գիւրիւսէ 283 միլեոն. 119 մուհաֆազալը գուլաւտօր 726 միլեոն. 16 մուհաֆազալը գուլաւտօր 56 միլեոն. 35 թօրքիլէօր 150 միլեոն. 120 գօնթըլ թօրքիլէօր 150 միլեոն, 98 թօրքիլէօր (իքիւնի սընթ) 50 միլեոն։ Մէճմուլի 489 վարօր վէ գըլմէթի 2,700,000,000 ֆրանկ։

Ախիւրէն հաբըլմագտա օլան սէֆիլիլէր պու հիսապտան տըշարը տըր. էկէր անլէրի տախի գամմիտէճէք օլուր իսէք, եէնի 27 սէֆիլիլէր գըլմէթի իլէ պէրապէր 3 միլեար 125 միլեոն ֆրանկա պալիլ օլուր։

ՍՈՒՀԱՐԷՊԷ

—

Պօէրլէր քէմալը սէպաթլէ ինկիլիլէր տէհէլէթ վէրմէքտէ տիրլէր։ Ժէնէրալ Հուայթըն գօմանտաւ ալթընտա պուլընան գուվվէի տաքէրիյէ եարը գուվվէթտէ գալմըլ տըր։

Ինկիլիլէր լատամիթտէ մէվգըլարըն մուհաֆազա իտէմէլ հուլէ կէլմիշ վէ ագչամ սապահ Պօէրլէրին լատամիթի ֆէլմիշ իթմէլէրի պէքլէնիլիօր։

Գօլէսպէրկ գասապաւը Պօէրլէրին զարպընա տայանաւայուպ թէս լիմ օլընմըլ, վէ իշէրտէ պուլընան պիր թագըմ ինկիլիլ ասքէրլէրի եէսիւր տիւշմիւշլէր։

Պօէրլէր շիտտէթլէ լատամիթի թօրա թուլթազտա օլտըլընը Լօտարաւան պիլտիրիլիօր. մէքքիւր շէհրին թահլը մուհաֆէրտէ օլտըլը կիպի, 15 կիւնսէն էվէլի իմտաւ եէթիլէճէկինէ իմիւտ եօգըմըլ։ Լատամիթ կաղէթալարըն պէյնընա պինսէն, Պօէրլէրին թօրլարը շէհրէ պէօյիւք զարար վէրմէյօրլար ըմըլ։ Քէզա ինկիլիլ մէնպալարտան ալընան հապատիսլէրէ նազարէն լատամիթ վէ Գօլէնսօ արաւընտա նոյեմ. 2 տէ վուգու պուլան պիր մուհաֆէրտէ Պօէրլէր մաղլուպ օլարագ գաշմըլար վէ ինկիլիլէր անլէրին թէքք իթմիշ օլտըլը մուհիմմաթը զապթ իթմիշ տիր. տիկէր թէլէկրաֆլար իսէ Գօլէնսօն տախի Պօէրլէրտէն զապթ օլընտըլընը պիլտիրիլիօրլար։ Քէզա ինկիլիլ մէնպաւընա կէօրէ Պէսթէր նամ մահէլտէ տախի Պօէրլէր մաղլուպ օլարագ բէք չօգ թէլէֆիլաթ վէրուպ կէրի չէքիլմիշլէր։

Նիհայէթ Պօէրլէրին էվէլէքի իքի թիլթուհաթը թաստիգ օլընմըլ օլարագ օնտան սօնրա վուգու պուլան զապկալարըն նէթիճէսի ճիտտի սուրճթտէ պիլինմիլիօր. եալընըլ ինկիլիլէրին լատամիթտէ մուհաֆէրտէ պուլընտըլարը ինքեար օլընմայօր։

— Հոլանտա Պօէրլէրին ֆիթուհաթընտան տօլայը պէօյիւք սէվինճ հիւքմ իտիյօր։

— Օրանժ Պօէրլէրի 8500 քիլիլէք պիր ալալէ ինկիլիլ միւսթէվէթաթընտան օլան իւմիւտ-Պուրնու սինօրընը թէճալիլ իթմիշլէր։

— Ինկիլիլէր Լիտիգ թապիր օլընան բէք տէհէլէթի պիր պալթուլ իսթիլալ իթմէքտէ պուլընտըլարընտան, Պօէրլէրին գօմանտանը Ժէնէրալ Ժուպէր բրօթէսթ իթմիշ տիր։ Մէքքիւր պարուլթիլէ աթըլան կիւլէր տիւշտիւք։

լէրի մահէլին պիլթիւն ճիլարընտա պուլընանլարը տագիգասընտէօլտիւրմէքտէ իմիշ. պիր կիլիլ տիւշտիլի մահէլտէքի 100 գօլմտան 80ը էօլտիւրմիւշ տըր. շուրաւ ճախի թաաճուպ տըր թէօլէնլէրտէ հիշ եարա էսէրի կէրիւմէլ իմիշ։

— «Մօրնիկ Բօսթ»-ըն պէյնընա կէօրէ, Բուսիա, Ֆրանսա վէ Սպանիա հիւքիւմէթլէրի պէյնիտէ վէրիլէն պիր զարար իւլթիլթրանսպալ մուհաֆէրտէսինէ հայէթ վէրմէք իշիւն իքիլթրաֆա թէվասիւլթ իթմէք պուլընտա Ալմանիայա տախի թէլիֆ օլընմըլ իսէտէ, պու ընտ իթմիշ տիր։

— «Թայմ» տախի մուհաֆէրտէսինէ էվէլէյ վէ նէթիվասիւլթ գապուլ օլընմայալընը իսթիւր իտէյօր։

„ԻՐԱՆԻՈՒՆՔ“Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Տ. Վ. Գ. Ռուստոք. — Իրաւունքի ներկայ տարւոյ հաւաքածոյն (Բոյիլի) 15 ֆրանցի կը ծախենք. մէկ քանի պուկա թիւերուն փոխարէնը կը գնդիլթիւ նախորդ տարինիւր. հաւաքածոյնը 20 կան ֆրանցի կը ծախուին։

— Տ. Ա. Ա. Բիթէլը. — Ձեր բաւնեղինը ստացած ենք։

— Տ. Ն. Պ. Ալէքսանտրիւ. — Ձեր զրկած յայտարարութիւնը ուշ հասաւ ըլլալուն պատճառով չհրատարակուեցաւ. բաժնեգիրն ստացած ենք։

ԿԸ ՓԵՏՈՒՈՒԻ

Փայտի վրայ փորագրութիւն ընդ վարպետ մը, որ եթէ գոհացուցիլ զթարտադրէ աւելի գոհացուցիլ ամսական կըստանայ։

Դիմել Բ. Իքօնօմօլի տպարան վառան

ՕՓԵԼ „ՔԼՈՎՏԻԿ“

ՊԱԼԸԲ ԻՍՋԱՐ Ն. 462

ՂԱՆԱՆ

Այս պանդոկը վերջու մեր տնօրինութեան տակ մտաւ ըլլալով իր առջի վիճակը բոլորովին բարեփոխուած է. յոճ. խորհրդերը ըստ ամենայնի զօրկացուցանելու համար հակառակ համաստ գնեցուն, մաքրութեան մեծ հոգ ու խնամք կը տարուի։

10—6 ՅԱՎՈՐ ՄԻՆԱՍԵԱՆ

ՉԱԽԻՐԻ ԲԻԱՑԱՍԸ

—

Վառան, Հոկտեմբեր 2

Պողոսյ

Վալ. լիպրա 55-58 հէք 9-20. 10 ֆր.

Արապա, 53-60 հէքթ. 9-50-11-20

Պաւուրչա 100 քիլօ 12-20 ֆր.

Արքա

Լիպրա 40-44 հէքթ. 6-50-1-40 ֆր.

Մըլըր եօգ

Կիւնտէ 20-150 արապա վէ 10-15

Վալօն պուլտայ վէ 20-30 արապա

արա 15-20 արապա ֆասուլիս կէմէքտէ տիր։

Արապա մուսալէլսի Նարոյէօն 21 ֆր. 20 տան թիւ հիսապը իլէ։

Отговорникъ Н. Драгулевъ

Печатница на Хр. Н. Войнико